ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/199

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.08.2020թ. թիվ 26/26-1/12333-2020 գրությամբ Ա/Ձ Որսկանյան Ալեքսանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ քննչական կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 13.08.2020թ. թիվ 08/18/43071-20 գրության հիման վրա 18.08.2020թ. թիվ 26/26-1/12333-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Որսկանյան Ալեքսանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/199 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 11:20-ին և 04.09.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3.**<u>ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քննչական կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.08.2020թ. թիվ 08/18/43071-20 գրությամբ հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ ենթակետի ա) պարբերության համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով պայմանագիրը 12.08.2020թ. միակողմանիորեն լուծվել է:

Միաժամանակ հայտնել է, որ տրամադրում է Մասնակցի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/199 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 11:20-ին և 04.09.2020թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/199 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/199 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքվել է թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը ստանձնել է բեռնատարների վարձակալություն՝ վարորդի հետ միասին, ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

3. Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, բեռնատարների վարձակալություն՝ վարորդի հետ միասին, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել 20.12.2020թ.-ը:

4. Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը Պատվիրատուին ուղղված 11.08.2020թ. թիվ 01/08 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով պայմանագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետի համաձայն սույն թվականի օգոստոսի 11-ին Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը ժամանակավոր դադարեցրել է իր գործունեությունը, հետևաբար չի կարող մատուցել ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 պայմանագրով նախատեսված ծառայությունները:

5. ՀՀ քննչական կոմիտեն Ա/Ձ Որսկանյան Ալեքսանին ուղղված 12.08.2020թ. թիվ 08/18-95-20 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով պայմանագիրը, համաձայն Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի 11.08.2020թ. ներկայացված թիվ 01/08 գրության, 2020 թվականի օգոստոսի 12-ից լուծվում է:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 12.08.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2020թ. թիվ 26/26-1/12333-2020 գրությունը, ՀՀ քննչական կոմիտեի 13.08.2020թ. թիվ 08/18/43071-20 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքվել է թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը ստանձնել է բեռնատարների վարձակալություն՝ վարորդի հետ միասին, ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1

հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 ենթակետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, բեռնատարների վարձակալություն՝ վարորդի հետ միասին, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել 20.12.2020թ.-ը:

Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը Պատվիրատուին ուղղված 11.08.2020թ. թիվ 01/08 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով պայմանագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետի սույն թվականի օգոստոսի 11-ին Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը ժամանակավոր դադարեցրել է իր գործունեությունը, հետևաբար չի կարող մատուցել ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 պայմանագրով նախատեսված ծառայությունները՝ կից ներկայացնելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017թ. հունիսի 27-ի N 195-Ն հրամանի հավելվածը՝ հարկ վճարողի գործունեությունը որևէ օրվանից անորոշ կամ որոշակի ժամկետով դադարեցնելու և գործունեությունը վերսկսելու մասին հայտարարությունը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ծանուցումը՝ Մասնակցի կողմից 11.08.2020թ. ներկայացված հաշվետվությունը ընդունվելու վերաբերյալ:

ՀՀ քննչական կոմիտեն Ա/Ձ Որսկանյան Ալեքսանին ուղղված 12.08.2020թ. թիվ 08/18-95-20 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով պայմանագիրը, համաձայն Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի 11.08.2020թ. ներկայացված թիվ 01/08 գրության, 2020 թվականի օգոստոսի 12-ից լուծվում է:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 12.08.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Պայմանագրի 2.4.3 ենթակետով սահմանվում է, որ Կատարողը պարտավոր է որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

<u>ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝</u>

<u>1. Պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:</u>

<u>3.Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված</u> կամ փոփոխված:

Այսպիսով՝ Ա/Ձ Որսկանյան Ալեքսանն իր և ՀՀ քննչական կոմիտեի միջև 22.07.2020թ. կնքված Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում բեռնատարների վարձակալություն՝ վարորդի հետ միասին, ծառայության մատուցման պարտականությունը: Արձանագրում եմ, որ Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը Պատվիրատուին ուղղված 11.08.2020թ. թիվ 01/08 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով պայմանագրի 2.4 կետի 2.4.3 ենթակետի համաձայն սույն թվականի օգոստոսի 11-ին Ա/Ձ Որսկանյան Ալեքսանը ժամանակավոր դադարեցրել է իր գործունեությունը, հետևաբար չի կարող մատուցել ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 պայմանագրով նախատեսված ծառայությունները:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ պատվիրատուն, լուծելով ՀՀ քննչական կոմիտեի և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանի միջև 22.07.2020թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-ՏՎ-20/1 ծածկագրով պայմանագիրը, գործել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջի համաձայն:

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Նման պայմաններում գտնում եմ, որ Մասնակիցը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.08.2020թ. թիվ 26/26-1/12333-2020 գրությամբ Ա/Ձ Որսկանյան Ալեքսանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Որսկանյան Ալեքսանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**